

Հոգեվոր Գրադարան

ՀՅԱ Ա ՀՅԱ

Յայ Առաքելական Սուրբ Եկեղեցու
Քրիստոնեական Դաստիարակության և
Քարոզչության Կենտրոն

ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ
ՊԱՏՌԻԱՌ ԿՈՍՏԱՆԱՆԻԹՈԼՈՒ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ԾԱՆՈՒՅՈՒՄ
ՔԱՇԱԱՆԵՐԻՆ
ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Բ հրապարակություն

ՄԱՅՐ ԱԹՈՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
2012

Արդարեն, քահանայի շրթունքները զգույշ պիտի վարչեն զիրության հետ, մարդիկ նրա բնուանից պիտի օրենքներ խնդրեն, քանի որ նա է Անենակալ Տիրոջ պատղամաքեռը (Մաղաք. Բ 7):

Առաջարան

Կյանքի Առաջնորդը՝ Աստված, Եգեկիել մարգարեի բերանով զգուշացնում է ժողովուրդների առաջնորդներին. «Մարդու որդի, Ես քեզ դեմ կարգեցի Իսրայելի այդ տանը. դու ինձնից պատղամներ ես լսելու և իմ անունից սպառնալու ես նրանց» (Եգեկ. Գ 17):

Ժողովրդի առաջնորդներ են անվանվում ոչ միայն վիճակավոր¹ եպիսկոպոսները, այլև բոլոր խոստովանահայր քահանաները: Ուստի յուրաքանչյուր խոստովանահայր քահանա վերը նշված Աստվածային Խոսքը պիտի համարի նաև իրեն ուղղված և միշտ զգոն լինի՝ զգուշանալով

¹ Թեմի առաջնորդ:

Ա հրապարակությունը՝

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ՔԴ-ՔՆ, 1996

իր խոստովանորդիների համար, որպես-
զի Աստված նրանց արյունը իրենից չպա-
հանջի:

Թեև այս զգուշությունն անհրաժեշտ է
հոգերը բոլոր ծառայությունները մատու-
ցելիս, այնուամենայնիվ ապաշխարութ-
յան խորհըրդի կատարումը առավել մեծ
զգուշավորություն է պահանջում քահա-
նայից, որովհետև մկրտությունից հետո
երկնքի Արքայություն մտնելու երկրորդ
պատեհությունն ընձեռում է ապաշխա-
րության խորհուրդը:

Ուրեմն խոստովանահայր քահանա-
ներին հույժ անհրաժեշտ է նախ՝ ստույգ
տեղեկություն ունենալ ապաշխարության
խորհըրդի վերաբերյալ, և երկրորդ՝ այն
պատշաճ կերպով ավանդել խոստովանոր-
դիներին:

Քահանաներն են հոգիների բժիշկները,
Բոլ նրանց դեղները՝ Սուրբ Գորի խոսքերը:

ԾԱՆՈՒՅՈՒՄ ՔԱՇԱՆԱՆԵՐԻՆ
ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐԴԴԻ
ՎԵՐԱՎԲԵՐՅԱԼ



ԳլուխԱ - ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀԻՔԻ ՍԱՌՄԱՆՈՒՄԸ

Ապաշխարության սահմանումը.

Այս խորհուրդը սահմանել է Մեր Տեր Շիւսու Քրիստոս, որով թողություն է պրկում զղացող ու խոսքովանող մարդու մկրտությունից հետո գործած մեղքերին՝ քահանայի իրավաբանական արձակմամբ ու պարշաճ վճարում դնելով:

Նախ՝ ասվում է, որ ինչպես մյուս խորհուրդները, այնպես էլ ապաշխարության խորհուրդը սահմանել է մեր Տեր Շիւսու Քրիստոս: Իշխանություն տալով բոլոր առաքյալներին՝ ասում է նրանց. «Առնե՛ք Սույր Շոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի. Եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Յովհ. Ի 22):

Քրիստոս՝ մեր Տերը, այս խորհուրդը նախ իր առաքյալներին ավանդեց և նրանց միջոցով՝ բոլոր վիճակավոր եպիսկոպոսներին, իսկ վերջիններիս միջոցով՝ նաև յուրաքանչյուր քահանայի:

Երկրորդ՝ ասվում է. որով թողություն է դրվում զղացող ու խոսքովանող մարդու մկրտությունից հետո գործած մեղքերին: [Այսպես է ասում], քանի որ մկրտությունից առաջ գործած մեղքերը այս դատաստանին ենթակա չեն, որովհետև Եկեղեցին ուրիշներին չի դատում, այլ նրանց, ովքեր արդեն մկրտության դռնով մուտք են գործել Եկեղեցի, ինչպես առաքյալն է ասում. «Իմ ինչ գործն է դասին նաև դրահններին» (Ա Կոր. Ե 12): Հետևաբար ապաշխարության խորհրդով ներվում են [Եկեղեցու զավակի] բոլոր մեղքերը՝ թե՛ ներելի, թե՛ մահացու, քանի որ Քրիստոս որևէ բացառություն չի անում, երբ ասում է. «Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի» (Յովհ. Ի 22):

Երրորդ՝ ասվում է. քահանայի իրավաբանական արձակմամբ, քանզի ապաշխարության խորհուրդը հաշտեցուցիչ դատաստան է, որի ժամանակ խոստովանահայր քահանան, իբրև դատավոր, տեսնելով մեղավորի զղումը և լսելով նրա

խոստովանությունը, նաև պարշաճ վճարում՝ դնելով նրա վրա, դատավորի իրավունքով արձակում է նրա մեղքերը և հաշտեցնում Աստծու հետ։

Հաշտեցուցիչ և վրեժինդիր դատաստանների միջև եղած տարբերությունը հետեւյալն է.

Վրեժինդիր դատաստանի ժամանակ պարտավորից² չի պահանջվում խոստովանել իր անօրենությունները, ցափով խորշել դրանցից և վճարել դրանց դիմաց, այլ բավական է որեւէ մեկի ամբաստանությունը, հաստատված ճշմարիտ վկայությամբ, որպեսզի դատավորն իր վճռով արժանի պատիժ որոշի։

Իսկ հաշտեցուցիչ դատաստանի դեպքում անհրաժեշտ է պարտավորի խոստովանությունը, որ անօրեն է եղել, և անձնական վկայությունը, որ ցափում է գործած անօրենությունների համար ու պատրաստ է վճարել պահանջվող ապաշխարանքը։

1 Վճարում - հատուցում։

2 Պարտավոր - մեղադրյալ։

Ապաշխարության խորհրդի երեք բաղկացուցիչ մասերն են՝ զղջումը, խոստովանությունը և վճարումը։

Առաջին երկուսը էական մասերն են, իսկ երրորդը՝ ամբողջական։ Այս երեքի մասին կխոսենք առանձին-առանձին։



ԳԼՈՒԽ Բ - ԶԴՂՋՈՒՄ

Զդղման սահմանումը.

Տողու ցավ և զարշուն գործած մեղքերի համար՝ այլևս երբեք չմեղանչելու միտադրությամբ:

Այս ցավը պետք է բավարարի հինգ պայմանի: Նախ՝ նեղքին ցավ պիտի լինի, որովհետև կոչվում է հոգու ցավ, այլ ոչ մարմնի կամ զգայության:

Երկրորդ՝ զերբնական, այսինքն՝ պետք է Սուրբ Հոգու ներշնչմամբ լինի: Ահա թե ինչու մոլորության մեջ են այն անձինք, ովքեր Աստծուց ապաշխարության կանչվելիս հապաղում են, կարծես ապաշխափանքը¹ կախված է միայն իրենց անձնիշխանությունից:

Երրորդ՝ համայն, այսինքն՝ [այն պետք է] տարածվի բոլոր, մանավանդ մահացու մեղքերի վրա: Ուստի եթե ապաշխարողը ցավի բոլոր մահացու մեղքերի համար,

սակայն անտեսի մեկը, թերևս մահվան մեջ մնա այդ մեկ մեղքի պատճառով:

Զորբորդ՝ առավել գարշել մեղքերից, քան որևէ այլ չարից:

Հինգերորդ՝ լինի ազդու հետագա ներգործությունների դեպքում, քանզի միայն կամեցողությունը բավական չէ ճշմարիտ զղման համար, այլ պահանջվում է ունենալ նաև այնպիսի դիտավորություն, որ մոտակա առիթի դեպքում կամավորապես հաղթահարի արգելքները, արմատախիլ անի արատները և որոնի ու ընտրի միջնորդներ, առանց որոնց անհնար է պահպանել այն նոր վարքը, որը մտադրվել է ունենալ զղացողը:

Զղումը երկու տեսակի է լինում՝ կատարյալ և անկատար: Կատարյալն առաջ է գալիս Աստծու [նկատմամբ տածած] սիրուց, իսկ անկատարը՝ մեղքի գարշությունից կամ գեհենի վախից:



1 Ապաշխափանք - ապաշխարություն:

Գլուխ Գ - ԽՈՍՏՈՎԱՌՆՈՒԹՅՈՒՆ

Խոստովանությունը սահմանվում է Հետևյալ կերպ.

Ապաշխարողի՝ մկրտությունից հետո գործած մեղքերի ամրասրանություն քահանայի առջև՝ արձակում սպանալու համար:

Միջնորդի՝ ներկայությամբ խոստովանությունը անհրաժեշտ է նրանց փրկության համար, ովքեր գայթել են մկրտությունից հետո, քանզի այս է Տիրոջ խոսքը. «Առեք Սուրբ Ռոգին: Եթե մենք մեղքերը ներկութեանց ներկած կլինի. եթե մենք մեղքերը չենք ներկութեած ներկած կլինի» (Յովի. Ի 22):

Եկեղեցին մշտապես իմացել և ընդունել է, որ մեղքերը անհրաժեշտ է մեկ առ մեկ հայտնել ապաշխարության ատյանին, քանի որ քահանաները չեն կարող դատել անծանոթներին, ոչ էլ արդարացի պատիժ նշանակել, եթե ապաշխարողները մեկ առ մեկ չխոստովանեն իրենց գործած մեղքերը: Ուսկեբը անն այդ մասին ասում է. «Չի կարելի ոչ մի հանցանքի համար թողություն

դրակ, եթեն եպիսկոպոսը կամ քահանան նախապես դրանք հանգանանորեն չեն քննել և հետազոտել»:

Հինգ պայման է անհրաժեշտ խորհրդական խոստովանության համար.

Նախ՝ մրտադրություն ունենալ, այսինքն՝ նախապես քննել, թե որոնք են գործած մեղքերը:

Երկրորդ՝ հավասպիտություն և ճշմարդություն, այսինքն՝ ապաշխարողը չպիտի ավելացնի կամ պակասեցնի մեղքերի քանակն ու ծանրությունը:

Երրորդ՝ զաղկնիություն, որպեսզի տկարամիտ մարդիկ չգայթակղվեն՝ լսելով խոստովանողի մեղքերը:

Չորրորդ՝ պարրագապակամություն՝ հազարնդվելու խոստովանահոր հրամաններին և ազգեցություններին:

Եվ հինգերորդ՝ ամրողականություն, այսինքն՝ մանրամասն բացատրություն նախ մեղքերի տեսակների և ապա պարագաների, որոնք կարող են փոխել մեղքի տեսակը: Սակայն խոստովանողը պարտա-

վոր է լոել մեղսակցի մասին և խոստովանել միայն իր և ոչ թե ուրիշի մեղքերը:

Դարդ. Քահանան կարո՞ղ է դրառմ խոսել այն մասին, ինչ ասվել է խորհրդական խոստովանության ժամանակ:

Պատրասխան. Ո՞չ: Երբե՞ք: Քահանան միշտ պիտի լոի, նույնիսկ մեծ վնասներ կրելու ու մահվան պառնալիքի դեպքում:

Դարդ. Ի՞նչն է ծածկվում գաղտնիության կնիքով:

Պատրասխան. Այն ամենը, ինչ հայտնի է դառնում խորհրդական խոստովանության ժամանակ, այսինքն՝ բոլոր մեղքերը՝ թե՛ ծանր և թե՛ թեթև, փորձությունները, հոռի բարքերը, բնական պակասությունները և այն ամենը, ինչի ի հայտ գալուց խոսսափում է ապաշխարողը:

Դարդ. Կարո՞ղ են երկու քահանաներ իրար հետ խորհրդակցելու նպատակով խոսել մեկի մեղքերի մասին, ում խոստովանությունը բազմիցս լսել են:

Պատրասխան. Ո՞չ: Երբե՞ք: Միայն խոստովանորդու ազատակամ համաձայնությամբ:

Տարգ. Կարո՞ղ է խոստովանահայրը խոստովանությունից դուրս խոսել խոստովանորդու հետ այն ամենի մասին, ինչը հայտնվել է խոստովանության ժամանակ:

Պատրասխան. Ո՞չ: Միայն այն դեպքում, եթե ինքը խոստովանորդին ցանկություն հայտնի, որովհետեւ նման խոսակցությունները կարող են ծանր լինել ապաշխարողների համար:

Խոսքը վերաբերվում է խոստովանությունից դուրս խոսակցություններին, քանի որ խոստովանության ժամանակ քահանան ոչ միայն կարող է, այլև պարտավոր է երբեմն ազդել խոստովանորդու վրա, որ շարունակ սայթաքում է նույն մեղքի պատճառով, որպեսզի է՛լ ավելի զգուշանա իր անձի համար:



Գլուխ Դ - ՎՃԱՐՈՒՄ

Վճարումը սահմանվում է այսպես.

Խոսկովանահոր կողմից դրված պատմի հանձն առնելը և Աստծու դեմ գործած անիշտավորյան փոխարեն նեղությունների ու չարչարանքների կամավոր կրելը:

Խոստովանահայրը ապաշխարանք դնելիս պետք է նկատի ունենա երկու հանգամանք. մեկը՝ մեղավորին պատժելը, մյուսը՝ պատժի նպաստավորությունը՝ մեղքի մեջ կրկին չընկնելու համար:

Տարդ. Կարո՞ղ է մեկ այլ քահանա փոխել խոստովանահոր դրած վճարումը:

Պատրասխան. Ո՞չ: Միայն այն դեպքում, եթե դրված ապաշխարանքը պատշաճ չէ, իսկ եթե հանկարծադեպ հանգամանք է վրա հասնում, ապա մեկ այլ քահանա, ապաշխարության խորհրդի ժամանակ լսելով նույն մեղքի խոստովանությունը, կարող է փոխել վճարումը:

Տարդ. Ինչպե՞ս է կատարվում վճարումը:

Պատրասխան. Երեք կերպ՝ աղոթքով, պահքով և ողորմությամբ: Այս նյութին կծանոթանանք ստորև:

Գլուխ Ե - ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՄԻ ՆՅՈՒԹԻ ԵՎ ԶԵՎԼԻ ՄԱՍԻՆ

Ապաշխարության խորհրդի նյութերն են՝ զղումը, խոսկովանությունը և վճարումը:

Ինչպես ասացինք, առաջին երկուսը խորհրդի էական մասերն են, իսկ երրորդը՝ նրա ամբողջական մասը, բայց ոչ էական: Քանի որ Աստված կարող է իր չնորհով այնպես ընդունել զղացողին, որ նույնիսկ ոչ մի վճարում չպահանջվի, ուստիև հոգեվարքի մեջ գտնվող ապաշխարողներին կամ նրանց, ովքեր տկարության պատճառով անկարող են իրավործել վճարումը, արձակումը տրվում է առանց որևէ վճարում դնելու:

Ապաշխարության խորհրդի ձևը քահանայի կողմից ասվող հետեւյալ խոսքն է. «Արձակում եմ քեզ մեղքի ամենայն մասնակցությունից»:

Տարդ. Քահանան ո՞ւմ մեղքերը չպիտի արձակի:

Պատրասխան. Վեց տեսակի մարդկանց:

Նախ՝ եղբոր նկատմամբ թշնամաբար վարդպղներին, ովքեր ատելությունից դրդված չեն կամենում հաշտվել և անկեղծ սիրով գնալ նրա մոտ:

Երկրորդ՝ նրանց, ովքեր, ժամանակ ունենալով հանդերձ, չեն մարում իրենց պարտքերը կամ չեն մաքրում իրենց կողմից վարկաբեկված մերձավորի անունը:

Երրորդ՝ ովքեր ավելորդ ծախսերով պարտքեր են դիզում, որոնք ի վիճակի չեն մարել, կամ եթե նույնիսկ ի զորու են, սակայն զանց են առնում, ինչի պատճառով մեծ վնասներ են կրում պարտատերերը՝ արհեստավորներն ու վաճառականները:

Չորրորդ՝ ովքեր զբաղվում են անարժան և արգելված արհեստներով, ինչպիսիք են վաշխառուները, խաղամոլները և այլն: Եթ կամ օրինավոր արհեստը չարին են ծառայեցնում, ինչպես պատկերահանները, ովքեր անպարկեշտ [տեսարաններ] են նկարում, և գրավաճառները, ովքեր ցանկություն առաջացնող գրքեր են վաճառում:

Հինգերորդ՝ ովքեր շրջում են մեղսածին որոգայթներում և չեն կամենում զգուշանալ մեղանչումների պատճառներից և առիթներից:

Վեցերորդ՝ ովքեր մեղադրելի անհոգությամբ անտեղյակ են մնում հավատի սկզբունքներին, ինչպես, օրինակ՝ Ամենասուրբ Երրորդության, Աստծու Բանի մարդեղության խորհուրդներին և քրիստոնեությանը վերաբերող հոգեոր այլ գիտելիքներին:



Գլուխ Զ - ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐԴՐԻՒ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ

Ապաշխարության խորհրդի պաշտոնյաներն են եսիսկոպոսներն ու քահանաները, քանի որ նրանց է ուղղված հետեւյալ խոսքը. «Եթե մենք մեղքերը ներեք, նրանց ներփած կիխնեն. եթե մենք մեղքերը չներեք, ներփած չեն լինի» (Յովի. Ի 22):

Տարց. Ամեն քահանա կարո՞ղ է խոստովանություն լսել և արձակել:

Պարասիան. Ո՞չ: Թեպետ բոլոր քահանաները ձեռնադրությամբ իշխանություն ունեն կապելու և արձակելու, բայց նա, ով խոստովանահայրության է կարգվում, պետք է վիճակավոր եպիսկոպոսից հատուկ հրամանագիր ստանա: Հակառակ դեպքում նա իրավունք չունի խոստովանություն լսելու և արձակում տալու՝ բացառությամբ, եթե մեկին մահվան վտանգ է սպառնում: Սա հար և նման է վարդապետական պարագային, թեպետ բոլոր վարդապետերն իրավունք ունեն քարոզե-

լու, սակայն առանց վիճակի առաջնորդի հրամանի չեն քարոզում: Այսպես պետք է վարպետն և քահանաները:

Տարց. Հրամանագրված քահանան կարո՞ղ է արդյոք անխտաբար լսել այնպիսի մեկի խոստովանությունը, ով խոստովանում է մեկ այլ խոստովանահայր քահանայի մոտ, և արձակել նրա մեղքերը:

Պարասիան. Ո՞չ: Նա կարող է միայն լսել իր համայնքի [զավակների] խոստովանությունը և միայն նրանց արձակել տալ: Բացառություն են կազմում ծանր հիվանդները, որոնց ժամանակը չի ներում կանչել սեփական խոստովանահորը, և օտարականները, որոնց խոստովանահայրերը հեռավոր երկրներում են:



ԳԼՈՒԽ Է - ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐԴՐԵՒ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

**Ապաշխարության խորհրդի գործերը
Հինգն են:**

Նախ՝ մեղքերի թողովրյուն:

Երկրորդ՝ ազատագրում հավիքնենական
պարժից:

Երրորդ՝ Ասրծու հետ բարեկամության
նորոգում:

Չորրորդ՝ ներգործական օժանդակու-
թյուն, որով արդարացված մեղավորն
այսուհետև կկարողանա խուսափել մեղ-
քերից և հարատևել բարի գործերում:

Հինգերորդ՝ մեղքերի պարճառով կորց-
ուած առաքինությունների ու պարունակու-
թյունների կերպություն:

Տարց. Ինչպես ապաշխարությամբ կեն-
դանանում են մեղքերից մահացած առա-
ջին բարեգործությունները, նույնպես
և մեղանչելով կկենդանանա՞ն արդյոք
նախկինում քավված մեղքերը:

Պարասխան. Ո՞չ: Ապաշխարությամբ
քավված մեղքերը չեն կենդանանում:
Սա Աստվածային դատաստանին հատուկ
իրավունք է և տարբերվում է մարդկային
դատաստանից, որի ժամանակ մի անգամ
պատժված գողը, եթե դարձյալ գողութ-
յուն անի, չարաչար կպատժվի ու խեղդա-
մահ արվելով կկորչի:

Ի վերջո պետք է նաև այն իմանալ, որ
Սուրբ Եկեղեցու յուրաքանչյուր խորհր-
դի համար նախատեսված են զանազան
ընթերցումներ, որոնք հատուկ դիտավո-
րությամբ պետք է կատարվեն: Եթե ըն-
թերցումներն առանց դիտավորության են
կատարվում, ապա դրանց կարելի է անհո-
գի մարմին համարել: Ուստի խոստովա-
նահայր քահանան մեղքերն արձակելիս
պետք է առաջնորդվի այն դիտավորու-
թյամբ, որ երբ ինքը Աստվածային Խոսքով
արձակում է այս խոստովանորդուն երկրի
վրա, ապա նույն պահին վերջինս արձա-
կում է ստանում նաև երկնքում, որով-
հետև այդ է նշանակում Քրիստոսի խոս-

ՔԸ. «Ինչ որ արձակես երկրի վրա, արձակ-
ված պիտի լինի երկնքում» (Սատթ. ԺԶ 19):

Ապաշխարության խորհրդին վերաբե-
րող այս համառոտ տեղեկություններից
բացի, որ պարտավոր են իմանալ խոստո-
վանահայր քահանաները, պետք է իմա-
նան նաև, թե ինչպես դրանք ավանդել
խոստովանորդիներին՝ թե՛ մեղքերի պա-
րագաները քննելիս և թե՛ հարմար ապաշ-
խարանք դնելիս:



Գլուխ Ը - ԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՂԵՐԻ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ՔՆՆԵԼԻՄ

Խոստովանահայր քահանան որևէ մեկի
խոստովանությունը լսելուց առաջ նախ
ինքն է պարտավոր խոստովանել և արձա-
կում ստանալ, որովհետեւ կապված մեկը
չի կարող արձակել մեկ այլ կապյալի մեղ-
քերը, այլ անհրաժեշտության դեպքում
Աստված ներում է:

Ուստի քահանաները թեպետև պար-
տավոր են միշտ պատրաստ լինել, բայց
առավել ևս [պետք է պատրաստ լինեն]՝
Սուրբ Եկեղեցու խորհուրդները կատարե-
լիս. «Բժիշկ, բժշկի՛ր ինքո՞ք քեզ» (Ղուկ. Դ 23):

Արդ, խոստովանահայր քահանան
պարտավոր է զգուշություն դրսեորել
երեք հանգամանքներում.

Նախ՝ մեկի խոստովանությունը լսե-
լիս, [պետք է] նրան խոսել տա գործած
մեղքերի կարևոր պարագաների մասին,
քանզի դրանք են որոշում մեղքի առա-
վել կամ պակաս ծանր լինելը, իսկ երբեմն

Էլ փոխում են մեղքերի տեսակը։ Օրինակ՝ Հարվածելը բարկության մեղքի դրսեռումն է, բայց եթե Հարվածել են հղի կնոջը, ապա հնարավոր է, որ բարկության մեղքը փոխվի մարդասպանության, ուստի խոստովանության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել որոշ պարագաների վրա ևս, որպեսզի ըստ այդմ պատրաստվի դեղը։

Մեղքի կարեոր պարագաներն են. նախ՝ ո՞վ և ինչպի՞սի մարդ է գործողը՝ ծե՞ր, թե՞ երիտասարդ, տղե՞տ, թե՞ իմաստուն, որովհետև տարբեր է նույն մեղքի ծանրությունը ծեր մարդու կամ երիտասարդի, տղետի կամ իմաստունի համար։

Երկրորդ՝ ի՞նչ մեղք է գործվել, և մեղքի ո՞ր տեսակն է: Ինչպես, օրինակ՝ եթե գողություն է կատարվել, ապա ումի՞ց՝ աղքատի՞ ունեցվածքից, թե՞ հարուստի, կամ մարդո՞ւց, թե՞ եկեղեցուց։ Իսկ այս վերջինը փոխվում է մեկ այլ՝ ծանրագույն մեղքի, որ կոչվում է սեղանակոպտություն։

Երրորդ՝ որտե՞ղ է գործվել մեղքը, քանի որ տարբերությունը մեծ է՝ սովորակա՞ն, թե՞ սուրբ վայրում։

Չորրորդ՝ ե՞րբ է գործվել մեղքը, սովորական մի օ՞ր, թե՞ կիրակի կամ պահոցօր։

Հինգերորդ՝ քանի՞ անգամ է անհատը գործել նույն մեղքը։ Որքան շատ է կրկնվում մեղքը, այնքան ավելի է ծանրանում և առավելանում չարությամբ։

Վեցերորդ՝ ո՞վ է այն անձը, ում դեմ մեղք է գործված՝ օտարազգի՞ է, թե՞ հայրենակից, ազգակա՞ն է, թե՞ օտար։

Միայն օրինավոր չէ հարցնել մեղսակցի անունը։ Իսկ եթե խոստովանորդին պարզամտությամբ սկսի պատմել, պետք է լոեցնել նրան, քանի որ դա արդեն խոստովանություն չէ, այլ մատնություն։

Երկրորդ՝ խոստովանահայրը մեծ խոհեմություն պետք է դրսեորի խոստովանողին հարցեր տալիս, թեև նրա գործը միայն լսեն է և ոչ թե հարցեր տալը։ Իսկ եթե խոստովանորդին դժվարանում է խո-

սել տգիտության կամ ամոթի պատճառով, անհրաժեշտ է զգուշությամբ և իմաստությամբ հարցերով օդնել նրան, որպեսզի մեղքը ծածկելով չունայնացվի խոստովանությունը՝ վերածվելով սրբազդության:

Հատուկ շեշտում ենք՝ զգուշությամբ և իմաստությամբ, որովհետեւ պետք է նկատի ունենալ խոստովանողի հասակը, նրա ապրելակերպը և շատ ուրիշ պայմաններ ևս: Առավել զգուշավոր պետք է լինել մանավանդ երեխաների խոստովանության ժամանակ, որպեսզի անխոհեմ հարցերից անմեղները մեղք գործել չսովորեն:

Երրորդ մեծ խոհեմություն է հարկավոր խոստովանահորը խոստովանած մեղքերի համեմատ ապաշխարանք դնելիս: Երբ բժիշկը նշանակում է ոչ այն դեղը, որը պետք է տվյալ հիվանդության համար, ապա բժշկելու փոխարեն ծանրացնում է հիվանդի վիճակը, երբեմն նույնիսկ սպանում: Հետեւաբար մեծ զգուշություն է պահանջվում խոստովանահորից ապաշխարանք նշանակելիս: Այս զգուշություն-

նը մասնավոր կանոններով չի սահմանափակվում, այլ հանձնվում է խոստովանահոր խոհեմությանն ու իմացությանը: Այս մասին այստեղ խոսեցինք ընդհանուր ու համառոտակի:



**Գլուխ Թ- ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ ԴՆԵԼՈՒ
ԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ**

Հայտնի է, որ ամեն մեղք Աստծու դեմ է, բայց կան մեղքեր, որ վշտացնում են Տիրոջը, կան, որ վշտացնում են գործողին, կան, որ վշտացնում են մերձավորին: Օրինակ՝ հպարտության մեղքը վշտացնում է Աստծուն, բղջախոհության մեղքը՝ գործողին, իսկ ագահության մեղքը՝ մերձավորին:

Ուստի հպարտության ապաշխարանքն է խոնարհ աղոթքը, բղջախոհությանը՝ պահքը կամ ծոմապահությունը, իսկ ագահությանը՝ կարույալներին ողորմություն տալը:

Մերձավորի հանդեպ տարբեր կերպով են մեղանչում՝ բարկությամբ՝ եղբոր սիրտը վիրավորելով, որի դեղն է մեղա գալով հաշտվելը, կամ զրպարտությամբ մերձավորի անունը արատավորելով, այսինքն՝ նրան, ում ներկայությամբ արփել է զրպարտությունը, հայտնել ճշմարտու-

թյունը, թե այս եղբայրն անմեղ էր, իսկ ինքը զրպարտել է նրան: Եվ կամ եղբոր ունեցվածքը հափշտակելով, գողանալով և այլ վնասներ հասցնելով, որի գեղն է արածի դիմաց վճարելը, իսկ եթե կարողություն ունի, ապա իր անիրավության դիմաց ողորմություն տա աղքատներին, իսկ եթե ոչ, մեկ այլ հարմար ապաշխարանք կրի:

Բայց բոլորի ապաշխարանքը թող այս լինի. ով մի անգամ մեղք է գործել, այլևս չգործի և մեղքի պատճառից էլ հեռանա: Ինչպես, օրինակ, եթե կովի կամ հայհոյության պատճառը հարբեցողությունն է, այլևս երբեք գինի և օղի չխմի: Եթե չարագործության պատճառը որևէ տուն մտնելն է կամ մեկի հետ հանդիպելը, ապա թող երբեք չմտնի և չտեսակցի:

Մանավանդ երեխաների և պատանիների ապաշխարանքը լինի չար ընկերակցությունից ամեն կերպ հեռանալը:

Հասուն մարդկանց համար ապաշխարանք լինի իրենց ընտանիքի հոգսերը

Հոգալը, երեխաներին ուսման տալը և հետեւլը, որպեսզի լիարժեք ուսում ստանան:

Կանանց համար ապաշխարանք է պարկեշտ, հնագանդ և տնարար լինելը. առհասարակ բոլոր անձանց հետ եղբայրասեր, ազգասեր լինելը և հաշտ ու խաղաղ ապրելը, մանավանդ հայրենակիցների հետ:

«Հայր մեր» աղոթքը չիմացողների համար ապաշխարանքը թող այն ճիշտ սովորելը լինի: Նրանց, ովքեր ճիշտ խաչակնքվել չգիտեն, խոստովանահայրը ինքը ձեռքից բռնած սովորեցնի: Նաև [պետք է] նրանց վրա ապաշխարանք դնել, որպեսզի կարեոր աղոթքներն ու արարողությունները սովորեն: Կարեոր աղոթքներն են՝ «Նայր մեր», «Նավարար ի մի Ասպուած», «Անկանիմ առաջի քո» և «Նավարով խոսրովանին»: Անշուշտ, քրիստոնյաներին անհրաժեշտ է գոնե այսքանը անգիր իմանալ:

Իսկ անհրաժեշտ արարողությունները սրանք են՝ ճիշտ խաչակնքվելը, ծնրադրելը, Սուրբ Պատարագին Ավետարանի ընթերցանության ժամանակ գլխաբաց ոտքի կանգնելը, նստելն ու ծնկի գալը, նաև բարձրածայն չաղոթելը, այս ու այն կողմ չնայելը, չխոսելը, ամբողջությամբ Սուրբ Պատարագին մասնակցելը:

Նույնպես և եկեղեցուց դուրս բոլոր վայրերում պետք է քրիստոնյային վայել պարկեշտություն ունենալ, խստորեն զգուշանալ լեզվից՝ չհայհոյել ու չերդվել: Որովհետև ինչպես զանգակն է ձայնից ճանաչվում, նույնպես և քրիստոնյան՝ իր վարքից ու առավել ևս խոսքից: Ուստի ով հայհոյում է կամ սնոտի երդումներ տալիս, արժանի չէ քրիստոնյա կոչվելու: Խոստովանահայրերը պարտավոր են այս ամենը և դեռ ավելին, որպես ապաշխարանք, դնել իրենց խոստովանորդիների վրա՝ ըստ վայելչության:

Քահանաներից ոմանք ողորմության ապաշխարանք դնելիս հիշատակում են

ժամուցի¹, քառասունքի² և այլ ծառայությունների մասին, որով, ինչպես և լսել ենք, բամբասանքի առիթ են տալիս: Գուցե աշխարհականներից ոմանք, այս բամբասանքները չափազանցնելով, բոլոր քահանաներին վերագրեն: Ուստի խոստովանահայրը մեծ զգուշություն պետք է ցուցաբերի և չհշատակի դրանք խոսքի մեջ, այլ միայն հիշատակի աղքատներին, որպեսզի բարեպաշտ մարդիկ ինքնահոժար կամքով հոգեւորականներին նվերներ տան, որով կկատարվի Քրիստոսի հրամանը, թե՝ «Չդի առաք, ձրի էլ տվե՛ք» (Մատթ. Ժ 8):

Այսպիսով, ապաշխարության սրբարար խորհրդի վերաբերյալ այս համառոտ տեղեկությունները, իբրև բարի սերմ, սերմանեցինք ի լուր բարեկրոն քահանաների:

1 Ժամուց - դրամական նվեր հոգևորականին որևէ առիթով:

2 Բառասունք - Ըստ Սույր Յոզեֆ հրամանի և սույր հայութի սահմանած կարգի՝ վախճանվածների հիշատակի և նրանց հոգիների միսիթարության համար պետք է անխափան կատարել սահմանված աղոթքները և ապա տալ համայնքի քահանային և վանականներին տուրքեր, ազապես և այն ամենը, ինչ հրամայել է հանգուցյալը իր հոգու համար:

Թող Աստված անեցնի հարցուրապատիկ ու հազարապատիկ առարության՝ ցողելով ձեր վրա հոտունը շնորհների ու զիրության և զորացնի ձեզ զերագոյն ծառայությանը, որովհենով այս անելով և ուսուցանելով՝ մեծ կլուզվեր Երկնքի Առքայությունում, որին և մեզ և բոլոր Իր անվանը հավաքացողներին արժանի անի բարերար, մարդասեր և ողորմած Աստված:

Անեն:

Կարապետ Պատրիարք Պալաթեցի

Կարապետ Պատրիարքը ծնվել է 1763 թ., Կոստանդնուպոլիսի Պալաթ կոչված թաղում, որն այդ օրերին հայունի էր իր ուսումնական հասկապություններով:

Թաղի վարժարանն ավարտելուց հետո մենք նույն է Երևանում և այնքեղ կուսակրոնություն ընդունում: Վերադառնալով աշակերտում է Պողոս Պատրիարքին և օգնում նրան իր զորձերում:

Այդ փարիներին Պողոսը կաթողիկոպատրիք վերաբերող խնդիրների շուրջ մեծ հոգումներ էին դեղի ունենում: 1823 թ. հրաժարվելով իր պաշտոնից՝ Պողոս Պատրիարքը իր փոխարքն երաշխավորում է Տէր Կարապետ Արքական կուպոսին, որը 1823 թ. հոկտեմբերի 27-ին ընդունում է պատրիարք: Այս ինապուն հոգենոր այրը մասնավոր հոգածություն է ունեցել դպրոցների և ուսուական պատրիարքական համայնք: 1824 թ. իր կոնդակով համարական արքունիքի հանդեպ: 1828 թվականին հասկապում է նաև հմուտ վարդապետից բաղկացած առաջին ուսումնական խոր-

հուրիդը, որով փաստորեն Կ. Պողոսի բոլոր կրթական հասկապությունները դրվում են ուսումնական խորհրդի և պատրիարքարանի անմիջական հակողության ներքո: Նրա օրոք Կ. Պողոսը կատացվել ու նորոգվել են դասար և կեղծեցիներ:

1831 թ. սեպտեմբերի 4-ին հրաժարական է դաշիս, որից հետո առանձնանում Սլյուսարի Սուրբ Խաչ և կեղծեցում և իրեն նվիրում մարենագիրությանը: 1850 թ. այսպէս կնքում է իր մահկանացուն ու թաղվում դեղի գերեզմանագրանը:

Իր հեղինակությամբ հրաժարակալներ է «Լապտեր հաւատոյ» զիրքը: Մագիստրանտներից իմանում ենք, որ նա հեղինակ է նաև մի շարք այլ գրքերի՝ «Քարոզգիրք», «Քարոզ կիւրակէից», «Ի լապտեր հոգլոյ», «Մեկնութիւն պատրագի»: Ի շարու այլոց գրել է դաշեր, արդագրել ձեռագրեր և հեղինակալ և կեղծեցական այլ զործեր: Իր ժամանակակիցները նրան ներկայացրել են որպես «շքեղ ատենաքանութեամբ և խորախոր հուրդ մտօք» անձնավորություն:

ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿՈՍՏԱՆԱԿՈՒՂՈԼՍԻ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՔԱՇԱՆԱՋԵՐԻՆ՝
ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՂԴՐՈՒԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բ հրապարակություն

Թարգմանությունը և ընդիանուր խմբագրությունը՝

Արամ Դիլանյանի	Արամ Դիլանյանի
Խմբագիրներ՝	Գրիգոր Դարդինյան
	Արփինե Պապայան
Սրբագրիչ՝	Վոլոյյա Աքրահանյան

Դայ Առաքելական Սուրբ Եկեղեցու քրիստոնեական
Դաստիարակության և Քարոզության Կենտրոնի
հրատարակչություն

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ